ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն տեղեկատվական թերթիկը վերաբերվում է կրթության ոլորտում պետության կողմից մատուցվող հանրային ծառայություններին: Այն տեղեկատվություն է պարունակում ՀՀ կրթական համակարգի, ուսումնական հաստատությունների, ՀՀ Կրթության & գիտության նախարարության համապատասխան ստորաբաժանումների, մասնավորապես հանրակրթության & մասնագիտական կրթության վարչությունների գործառույթների & հեռախոսահամարների, ինչպես նա& պետական բուհերում ուսման վարձի փոխհատուցում ստանալու հնարավորությունների վերաբերյալ:

Մայիս 2004

Կրթության ոլորտում գործառույթներ իրականացնող գործադիր իշխանության հանրապետական մարմինը ՀՀ Կրթության և գիտության նախարարությունն է, որը մշակում և իրականացնում է կրթության և գիտության բնագավառներում ՀՀ կառավարության քաղաքականությունը:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ Ի՞ՆՉ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ՄԱՏՈՒՑՎՈՒՄ
Այդ բնագավառները հետևյալն են.
ա) հանրակրթություն,
բ) մասնագիտական կրթություն
ա) Հանրակրթության բնագավառ:
Հանրակրթական ծրագրերն իրականացնում են նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատությունները:
Հատուկ (օժանդակ) հանրակրթական դպրոցների ծրագրերը մշակվում են հիմնական հանրակրթական ծրագրերի հիման վրա՝ հաշվի առնելով սովորողների տարիքային, հոգեբանական, ֆիզիկական զարգացման առանձնահատկությունները և կարողությունները:
Հանրակրթության բնագավառում իրականացվող հիմնական ծրագրերն են.
ա) նախադպրոցական կրթություն,
բ) տարրական ընդհանուր կրթություն,
գ) հիմնական ընդհանուր կրթություն,
դ) միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն,
ե) հատուկ ընդհանուր կրթություն
Կան նաև լրացուցիչ ծրագրեր, որոնք ուղղված են հիմնական ծրագրերից դուրս սովորողների կրթական պահանջմունքների բավարարմանը և նրանց որակավորման բարձրացմանը:
Նախադպրոցական կրթությունն իրականացվում է մսուր-մանկապարտեզում (1-6,5 տարեկան երեխաների համար), մանկապարտեզում (3-6,5 տարեկան երեխաների համար): Ներկայումս նախադպրոցական կրթության ոլորտում գործում է 900 համայնքային (որից 300-ը սեզոնային) և 19 գերատեսչական հաստատություն: Գործում է նաև 21 ոչ պետական մանկապարտեզ:
Տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությունն իրականացվում է հանրակրթական դպրոցներում՝ 11 տարի ընդհանուր տևողությամբ: Այն ներառում է 3 աստիճան.
ա) տարրական դպրոց (1-3-րդ դասարաններ),
բ) միջին դպրոց (4-9-րդ դասարաններ),
գ) ավագ դպրոց (10-11-րդ) դասարաններ:
Առաջին 2 աստիճանները կազմում են հիմնական դպրոցը, որտեղ կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 16 տարեկան դառնալը:
Ներկայումս գործում է 1388 հանրակրթական դպրոց, որից 10-ը տարրական, 150-ը՝ հիմնական (իննամյա) և 1228-ը՝ միջնակարգ: Գործում են նաև լիցենզավորված 26 ոչ պետական դպրոցներ:
Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպվում է հատուկ կրթական հաստատություններում (այդ թվում՝ երկարօրյա և գիշերօթիկ): Հատուկ ընդհանուր կրթությունն իրականացվում է հանրակրթական և հատուկ ծրագրերով:
Գործում է 51 պետական գիշերօթիկ հաստատություն, որոնցից 38-ը նախատեսված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, 5-ը՝ առանց ծնողական խնամքի մնացած և սոցիալապես անապահով ընտանիքների, 8-ը՝ օժտված երեխաների ուսուցման համար:
Իրականացվում է նաև արտադպրոցական կրթություն, որն ընդգրկում է կրթությունն ու դաստիարակությունը մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոններում, երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներում, ակումբներում, պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների և տուրիստական կայաններում,

մարզադպրոցներում, առողջարարական ճամբարներում և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ կազմակերպություններում:
Գործում է 168 արտադպրոցական հաստատություն, որից 12-ը ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության:

Կոնտակտներ. հանրակրթության վարչություն՝
հեռ. 524749:

բ) Մասնագիտական կրթության բնագավառ
Մասնագիտական կրթության բնագավառում իրականացվում են հետևյալ ծրագրերը.
ա) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն,
բ) միջին մասնագիտական կրթություն,
գ) բարձրագույն մասնագիտական կրթություն,
դ) հետբուհական մասնագիտական կրթություն,
ե) լրացուցիչ կրթություն
Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունն իրականացվում է նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ արհեստագործական ուսումնարաններում, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (քոլեջներում), մասնագիտական տեխնիկական ուսումնարաններում (ՄՏՈՒ)՝ հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա, միջնակարգ հանրակրթական դպրոցների ավագ դպրոցի արհեստագործական հոսքերում, ուսումնական կենտրոններում, քրեակատարողական հիմնարկներում: Գործում է 56 ՄՏՈՒ՝ վճարովի և անվճար հիմունքներով և 27 այլ նախնական մասնագիտական հաստատություն՝ անվճար հիմունքներով:
Միջին մասնագիտական կրթությունն իրականացվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (ՄՄՈՒՀ)՝ քոլեջներում և ուսումնարաններում: ՄՄՈՒՀ-ներում ուսուցումն իրականացվում է հիմնական ընդհանուր և միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքի վրա՝ առկա և հեռակա ուսուցման ձևերով: Ուսման տևողությունն է 1 տարի 10 ամսից մինչև 4 տարի 10 ամիս: Շնորհվում է կրտսեր մասնագետի որակավորում: Գործում են 80 պետական և 20 ոչ պետական ՄՄՈՒՀ՝ անվճար և վճարովի հիմունքներով: Միջին մասնագիտական կրթություն իրականացվում է նաև որոշ պետական ԲՈՒՀ-երի կազմում գործող քոլեջներում:
Բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում ուսուցումն իրականացվում է հետևյալ հաստատություններում՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա, կոնսերվատորիա:
Տրվում են որակավորման հետևյալ աստիճանները.
ա) բակալավր,
բ) դիպլոմավորված մասնագետ,
ա) մագիստրոս:
Գործում են 16 պետական (10 մասնաճյուղով) և 73 ոչ պետական բուհ:
Հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բուհերի և գիտական հիմնարկների ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում: Ներկայումս ՀՀ 9 բուհերում գործում են ասպիրանտուրա և դոկտորանտուրա:

Կոնտակտներ. մասնագիտական կրթության
վարչություն՝ հեռ. 525662:
Ո՞ՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՀԱՎԱԿՆԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒՆ
Պետական բուհերն իրենց հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին փոխհատուցում են ուսման տարեկան վարձը՝ հիմք ընդունելով ուսանողների առաջադիմությունը:
Ուսման վարձի փոխհատուցման ենթակա ուսանողների տարակարգերն են.
ա) երկկողմանի ծնողազուրկ,

բ) միակողմանի ծնողազուրկ, ովքեր գտնվում են սոցիալական ծանր պայմաններում,
գ) զոհված ազատամարտիկի ամուսին կամ երեխա, պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանող, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ (այն մասնագիտությունների համար, որտեղ նախատեսված է միայն վճարովի ուսուցում),
դ) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող,
ե) երեք և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքի անդամ,
զ) չորս կիսամյակ անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող,
է) ՀՀ ԿԳ նախարարության կամ տվյալ բուհի աշխատակցի երեխա, ովքեր տվյալ հիմնարկությունում աշխատում են 5 և ավելի տարիներ,
ը) վճարովի համակարգում երեք և ավելի ուսանողներ ունեցող ընտանիքի անդամ,
թ) հեռավոր լեռնային կամ սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցի ուսուցիչների երեխա,
ժ) սոցիալապես անապահով այլ տարակարգեր (փախստականներ, 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ ծնողներ ունեցող և այլն),
ժա) ուսումնառության ընթացքում 1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ դարձած,
ժբ) բուհի կողմից սահմանված այլ տարակարգեր:

ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ՉԱՓՆ ՈՒ ԿԱՐԳԸ
ա, գ, զ, ժա կետերում նշված ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը սահմանվում է մինչև 80% (բացառիկ դեպքերում՝ մինչև 100%), իսկ բ, դ, ե, է, ը, թ, ժ կետերում նշված ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը սահմանվում է մինչև 50% (նշված տոկոսադրույքից ավել վարձի փոխհատուցման մասին որոշում բացառիկ դեպքերում կարող է կայացնել բուհը):
Ուսման վարձի փոխհատուցման համար դիմումները տրվում են բուհի ղեկավարությանը՝ կից ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը.
ա) փաստաթուղթ ուսանողի և նրա ընտանիքի կարգավիճակի մասին,
բ) ֆակուլտետի դեկանատի նիստի քաղվածքը՝ համապատասխան միջնորդությամբ,
գ) տեղեկանք ուսանողի առաջադիմության վերաբերյալ,
դ) ուսանողի առողջական, սոցիալական վիճակը հավաստող փաստաթղթեր:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱՐՈՂ ԵՔ ԴԻՄԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻՆ՝ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՆԵՐՈՎ

ք. Երևան, Նալբանդյան 7, բն 2;
հեռ/ֆաքս. 223786, 540199, էլ. փոստ՝ yerevan@ayla.am
ք. Գավառ, մարզպետարանի շենք, 4-րդ հարկ, հեռ/ֆաքս. (064) 25503, էլ. փոստ՝ gavar@ayla.am:
ք. Կապան, Ա. Մանուկյան 1, բն. 72,
հեռ/ֆաքս (085) 62511, էլ. փոստ kapan@ayla.am
ք. Գյումրի, Տիգրան Մեծի փող. 1 բն. 2;
հեռ/ֆաքս. (041) 38236, էլ. փոստ gyumri@ayla.am:
ք. Վանաձոր, հեռ/ֆաքս. (051) 22317,
էլ. փոստ՝ vanadzor@ayla.am:
ք. Իջևան, Մարզպետարանի շենք,
հեռ/ֆաքս. (063) 62499, էլ. փոստ ijevan@ayla.am:
ք. Գորիս, Մաշտոցի փող. 3, 2-րդ հարկ.,
հեռ./ֆաքս (084) 25861, էլ. փոստ goris@ayla.am:

Նաև կարող եք այցելել ՀԵԻԱ վեբ կայք www.ayla.am և ՀՀ կրթության և գիտության նախարարության վեբ կայք՝ www.edu.am հասցեներով:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից՝ ՓրայսուոթերհաուսՔուփերի և ՀՀ Կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ Միացյալ Թագավորության Միջազգային Զարգացման նախարարության կողմից տրամադրված միջոցների հաշվին: